ամարանոց էր Դ. դարում, մնացած են գե–րեզմանական կոթողների շատ մնացորդներ, եկեղեցին բոլորովին քանդուած, բայց նոյն սահմաններում Թարարայ վանք կոչուած վայրում բազիլիկ եկեղեցու մնացորդները կան, որտեղից Սեներքերիմ Տէր Յակոբեանը Էջմիածնի թանգարանն էր փոխադրել մի շատ լաւ պահուած կոթող, այժմ Երեւանի թան–գարան տարուած:

Աւջանից ոչ հեռու դէպի լեռնակողմը, Հաջի Բայրամ կոչուած վայրում, կար մի կոթող, Աստուածածնի քանդակով, որի գըլ–խին վերից դէպի ցած սուսանող հրեշտակը (Պատկ. 31) պսակ է դնում Աստուածածնի գլխին, հաւանօրէն այդտեղ միայն շատ փոքր մատուռ է եղել, կոթողը փոխադրուած է Էջ–միածնի նախկին թանգարանը: Նման գերեզ–մանական յուշարձանի, առանց եկեղեցու՝ հանդիպել ենք եւ ուրիշ տեղերում, ինչպէս մէկը Բիւրականի և Համբերդի մէջ եղած ճա–



Պատկ. 31